# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 30 -ին, N 321
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, 22-րդ հոդվածի 9-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոս ամսին աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ ենթակա է վճարման ընդամենը՝ 378288 (երեք հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր ութսունութ) դրամ:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2021 թվական N 320

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 11 քաղաքացիների հատկացնել 330000/երեք հարյուր երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՈՒՏԶ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Աշտարակ

2021թ. սեպտեմբերի 28 N 319

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 301 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ի հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա.Հարությունյանի 2021թ. սեպտեմբերի 23-ի N 02/11./32847-2021 գրությունը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2003 թվականի նոյեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու մասին>> թիվ 301 որոշմամբ հաստատված հավելվածը լրացնել 26 –րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

ա )սահմանել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պարտականությունն իր իրավասության սահմաններում՝ ապահովելու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը համապատասխան մարմնում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս.

բ) ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.

գ)սահմանել, որ համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվեն տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկօրյա (աշխատանքային)

ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:

դ) սահմանել հանրային իշխանության մարմնում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի պարտականությունը՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալիս սույն կետի «ա» ենթակետի հիման վրա որոշված անձին ներկայացնելու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

ե)մինչև <<գ)>> կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:

զ) սահմանել ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրություն (զեկուցագիր և այլն) ներկայացնելու հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետ և նախատեսել նման բացատրության (զեկուցագրի և այլն) գրավոր ներկայացման պահանջը:

2.Հայասանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2003 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 301 որոշմամբ սահմանված հավելվածում <<Աշխատակազմի ղեկավար>> բառերը փոխարինել <<Գլխավոր քարտուղար>> բառերով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3208910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**2021թ. սեպտեմբերի 28-ին, N 318**
**ք. Աշտարակ**

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/11./32847-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատու նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար Հրաչյա Գևորգյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբեր 2021թվականի N 317

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ << ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ >> ԾՐԱԳՐՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N1004 -Ն որոշման՝ N 2 և N5 հավելվածներով.

**ՈՐՈՇՈՒՄԵՄ՝**

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի կրթության բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների <<Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում>> ծրագրով 2021 թվականին հատկացված գումարների վերաբաշխումը համաձայն հավելվածի:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2021 թվականի սեպտեմբերի 27 N 3/7 որոշման

ՀՀ Արագածոտնի մարզի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա դաստիարակների վերապատրաստում

| N | Ուսումնական հաստատության անվանումը | վերապատրաստման ենթակա մանկավարժների թիվը | Ընդամենը գումարը |
|---|---|---|---|
| 1 | ք. Աշտարակի թիվ 1 հմ/դ | 10 | 240,0 |
| 2 | ք. Աշտարակի թիվ 2 հմ/դ | 5 | 120,0 |
| 3 | ք. Աշտարակի թիվ 3 հմ/դ | 4 | 96,0 |
| 4 | ք. Աշտարակի թիվ 4 հմ/դ | 11 | 264,0 |
| 5 | ք. Աշտարակի Վ.Պետրոսյան անվ. | 9 | 216,0 |
| 6 | ք. Մուղնու հ/դ | 4 | 96,0 |
| 7 | գ. Բյուրականի մ/դ | 7 | 168,0 |
| 8 | գ. Կարբիի մ/դ | 9 | 216,0 |
| 9 | գ. Օշականի մ/դ | 10 | 240,0 |
| 10 | գ. Ոսկեվազի մ/դ | 11 | 264,0 |
| 11 | գ. Կոշի մ/դ | 9 | 216,0 |
| 12 | գ. Ուջանի մ/դ | 6 | 144,0 |
| 13 | գ. Օհանավանի մ/դ | 7 | 168,0 |
| 14 | գ. Փարպիի մ/դ | 5 | 120,0 |
| 15 | գ. Սասունիկի մ/դ | 6 | 144,0 |
| 16 | գ. Ագարակի մ/դ | 5 | 120,0 |
| 17 | գ. Աղձքի մ/դ | 5 | 120,0 |
| 18 | գ. Նոր Եդեսիայի մ/դ | 4 | 96,0 |
| 19 | գ. Ուշիի մ/դ | 5 | 120,0 |
| 20 | գ. Արուճի մ/դ | 3 | 72,0 |
| 21 | գ. Արագածոտնի մ/դ | 4 | 96,0 |
| 22 | գ. Նոր-Ամանոսի մ/դ | 4 | 96,0 |
| 23 | գ. Բազմաղբյուրի մ/դ | 5 | 120,0 |
| 24 | գ. Ոսկեհատի մ/դ | 5 | 120,0 |
| 25 | գ. Ավանի Ա.Սերոբի անվ. մ/դ | 5 | 120,0 |
| 26 | գ. Արտաշավանի մ/դ | 5 | 120,0 |
| 27 | գ. Կարինի մ/դ | 5 | 120,0 |
| 28 | գ. Օրգովի մ/դ | 3 | 72,0 |
| 29 | գ. Ղազարավանի մ/դ | 3 | 72,0 |
| 30 | գ. Լեռնարոտի մ/դ | 3 | 72,0 |
| 31 | գ. Անտառուտի մ/դ | 4 | 96,0 |
| 32 | գ. Շամիրամի հմ/դ | 5 | 120,0 |
| 33 | գ. Օշականի հմ/դ | 3 | 72,0 |
| 34 | ք. Ապարանի թիվ 1 հմ/դ | 5 | 120,0 |

| | | | |
|---|---|---|---|
| 35 | ք. Ապարանի թիվ 2 հմ/դ | 7 | 168,0 |
| 36 | գ. Արագածի թիվ 1 մ/դ | 5 | 120,0 |
| 37 | գ. Արագածի թիվ 2 մ/դ | 4 | 96,0 |
| 38 | գ. Շենավանի մ/դ | 5 | 120,0 |
| 39 | գ. Քուչակի մ/դ | 5 | 120,0 |
| 40 | գ. Լուսագյուղի մ/դ | 4 | 96,0 |
| 41 | գ. Հարթավանի մ/դ | 6 | 144,0 |
| 42 | գ. Վարդենիսի մ/դ | 4 | 96,0 |
| 43 | գ. Վարդենուտի մ/դ | 5 | 120,0 |
| 44 | գ. Նիգավանի մ/դ | 3 | 72,0 |
| 45 | գ. Կայքի մ/դ | 4 | 96,0 |
| 46 | գ. Ծաղկաշենի մ/դ | 3 | 72,0 |
| 47 | գ.Ձորագլխի մ/դ | 3 | 72,0 |
| 48 | գ. Երնջատապի մ/դ | 3 | 72,0 |
| 49 | գ. Սարալանջի հմ/դ | 1 | 24,0 |
| 50 | գ. Թթուջրի հմ/դ | 1 | 24,0 |
| 51 | գ. Եղիպատրուշի մ/դ | 3 | 72,0 |
| 52 | գ. Ափնայի մ/դ | 3 | 72,0 |
| 53 | գ. Արայի հմ/դ | 2 | 48,0 |
| 54 | գ. Չքնաղի հմ/դ | 2 | 48,0 |
| 55 | գ. Ծաղկահովիտի մ/դ | 5 | 120,0 |
| 56 | գ. Հնաբերդի մ/դ | 6 | 144,0 |
| 57 | գ. Նորաշենի մ/դ | 4 | 96,0 |
| 58 | գ. Գեղաձորի մ/դ | 4 | 96,0 |
| 59 | գ. Մելիքգյուղի մ/դ | 4 | 96,0 |
| 60 | գ. Բերքառատի մ/դ | 4 | 96,0 |
| 61 | գ. Գեղադիրի մ/դ | 4 | 96,0 |
| 62 | գ. Գեղարոտի մ/դ | 3 | 72,0 |
| 63 | գ. Վարդաբլուրի մ/դ | 3 | 72,0 |
| 64 | գ. Լեռնապարի մ/դ | 4 | 96,0 |
| 65 | գ. Ալագյազի մ/դ | 4 | 96,0 |
| 66 | գ. Ծիլքարի մ/դ | 4 | 96,0 |
| 67 | գ. Ճարճակիսի մ/դ | 3 | 72,0 |
| 68 | գ. Ռյա Թազայի մ/դ | 3 | 72,0 |
| 69 | գ. Սիփանի մ/դ | 2 | 48,0 |
| 70 | Կանիաշիրի հմ/դ | 2 | 48,0 |
| 71 | գ. Սադունցի հմ/դ | 2 | 48,0 |
| 72 | գ. Շենկանիի հմ/դ | 2 | 48,0 |
| 73 | Ավշենի հ/դ | 1 | 24,0 |
| 74 | գ. Ջամշլուի հմ/դ | 3 | 72,0 |
| 75 | գ. Միջնատունի հմ/դ | 1 | 24,0 |
| 76 | գ. Միրաքի հմ/դ | 1 | 24,0 |
| 77 | ք. Թալինի թիվ 1 հ/դ | 6 | 144,0 |
| 78 | ք. Թալինի թիվ 2 հմ/դ | 6 | 144,0 |
| 79 | գ. Արագածավանի թիվ 1 մ/դ | 8 | 192,0 |

| | | | |
|---|---|---|---|
| 80 | գ. Արագածավանի թիվ 2 մ/դ | 6 | 144,0 |
| 81 | գ. Մաստարայի մ/դ | 5 | 120,0 |
| 82 | գ. Արտենիի թիվ 1 մ/դ | 6 | 144,0 |
| 83 | գ. Արտենիի թիվ 2 հմ/դ | 4 | 96,0 |
| 84 | գ. Կաթնաղբյուրի մ/դ | 4 | 96,0 |
| 85 | Ներքին Բազմաբերդի մ/դ | 5 | 120,0 |
| 86 | գ. Ներքին Սասնաշենի մ/դ | 3 | 72,0 |
| 87 | գ. Աշնակի Գ.Չաուշի անվ. մ/դ | 4 | 96,0 |
| 88 | գ. Ագարակավանի մ/դ | 4 | 96,0 |
| 89 | գ. Կաքավաձորի մ/դ | 4 | 96,0 |
| 90 | գ. Թաթուլի մ/դ | 4 | 96,0 |
| 91 | գ. Ակունքի մ/դ | 4 | 96,0 |
| 92 | գ. Դավթաշենի մ/դ | 5 | 120,0 |
| 93 | գ. Զարինջայի մ/դ | 4 | 96,0 |
| 94 | գ. Իրինդի մ/դ | 5 | 120,0 |
| 95 | գ. Կարմրաշենի մ/դ | 3 | 72,0 |
| 96 | Նոր Արթիկի մ/դ | 3 | 72,0 |
| 97 | գ. Ձովասարի մ/դ | 5 | 120,0 |
| 98 | գ. Դաշտադեմի մ/դ | 4 | 96,0 |
| 99 | գ. Պարտիզակի մ/դ | 4 | 96,0 |
| 100 | գ. Գառնահովիտի մ/դ | 3 | 72,0 |
| 101 | Շղարշիկի մ/դ | 4 | 96,0 |
| 102 | գ. Ոսկեթասի մ/դ | 3 | 72,0 |
| 103 | գ. Վերին Բազմաբերդի հմ/դ | 3 | 72,0 |
| 104 | գ. Ցամաքասարի հմ/դ | 2 | 48,0 |
| 105 | գ. Հացաշենի հմ/դ | 2 | 48,0 |
| 106 | գ. Եղնիկի հմ/դ | 2 | 48,0 |
| 107 | գ. Սուսերի մ/դ | 3 | 72,0 |
| 108 | գ. Դդմասարի հմ/դ | 1 | 24,0 |
| 109 | գ. Արևուտի հմ/դ | 1 | 24,0 |
| 110 | գ. Լուսակնի մ/դ | 2 | 48,0 |
| 111 | գ. Թլիկի հմ/դ | 1 | 24,0 |
| 112 | գ. Կանչի հմ/դ | 2 | 48,0 |
| 113 | գ. Գետափի հմ/դ | 2 | 48,0 |
| 114 | գ. Հակոյի հմ/դ | 1 | 24,0 |
| 115 | գ. Վերին Սասնաշենի հմ/դ | 2 | 48,0 |
| 116 | գ. Սորիկի հմ/դ | 1 | 24,0 |
| 117 | գ. Դիանի հմ/դ | 1 | 24,0 |
| **Ընդամենը** | | **478** | **11472,0** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 23-ին, N 316

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ռ. Ղազարյանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի Վ.Եղիազարյանի անվան հ.1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել փոխտնօրեն Ռուզաննա Ղազարյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. սեպտեմբերի 23-ին, N 315
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍՈՒՍԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Կ. Ղուկասյանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել ուսուցչուհի Կարինե Ղուկասյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2021 թվական N 314

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 7 քաղաքացիների հատկացնել 290 000 /երկու հարյուր իննսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՈՒՏՀ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. Գևորգյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. սեպտեմբերի 17 -ին, N 313**
**ք. Աշտարակ**

ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 22-ից Արսեն Ալեքսանյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի սեպտեմբերի 19-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. սեպտեմբերի 17-ին, N 312**
**ք. Աշտարակ**

ՄԱՐԻՆԱ ՔՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍՈՒՍԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 22-ից Մարինա Քոսյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի սեպտեմբերի 20-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2021 թ. սեպտեմբերի 15

N 310

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԳԻՇՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով և 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով՝ Ա.Հովհաննիսյանի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արգիշտի Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա արձակուրդի մի մասը 2019 թվականի նոյեմբերի 23-ից 2020 թվականի նոյեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածի համար, 11 աշխատանքային օր տևողությամբ՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2.<<Աշտարակի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները դնել բուժական գծով փոխտնօրեն Ա.Սարգսյանի վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ. սեպտեմբերի 15-ին, N 309**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ագարակավանի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի նախագահ Ա. Հակոբյանի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 6-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Թորոսյան Բենյամին Մխիթարի>> բառերը փոխարինել <<Ավագյան Սյուզաննա Լյուքսեմի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

N 308 — 13 09 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ COVID-19 ՎԵՐԱՊՐՈՖԻԼԱՎՈՐՎԱԾ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 24-ի No 3200 - Լ հրամանը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ԱԱ//18702-2021 2021 թվականի սեպտեբերի 08-ի գրությունը, «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի սեպտեմբերի 09-ի գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել COVID-19 վերապրոֆիլավորված «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021 թվականի օգոստոսի 23-ից ծագած հարաբերությունների վրա:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի ապրիլի 23-ի N82 որոշումը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

**Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ու Մ

**2021թ. սեպտեմբերի 10-ին, N 307**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Նոր Արթիկի և Սուսերի միջնակարգ դպրոցների կառավարման միացյալ խորհրդի նախագահ Ն. Մկրտչյանի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 3-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Սարոյան Կարեն Մոսկովի>> բառերը փոխարինել <<Մարգարյան Ավետիք Հովհաննեսի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 9 -ին, N 306
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԾԻԼՔԱՐԻ ԽՈՍՐՈՎ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԺԵԼՅԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ա. Մկրտչյանի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի սեպտեմբերի 9-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծիլքարի Խոսրով Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել փոխտնօրեն Անժելյա Մկրտչյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. սեպտեմբերի** 9 **-ին, N** 305
**ք. Աշտարակ**

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԾԻԼՔԱՐԻ ԽՈՍՐՈՎ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 9-ից Արման Հովհաննիսյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ծիլքարի Խոսրով Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի սեպտեմբերի 9-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 8 -ին, N 304
ք. Աշտարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Պ.ՊՌՈՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱԹԵՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ս.Թևանյանի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 8-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Պ.Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն Սաթենիկ Թևանյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. սեպտեմբերի** 8 **-ին, N** 303
**ք. Աշտարակ**

# ԿԱՐԻՆԵ ԱԼՄԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Պ.ՊՌՈՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 8-ից Կարինե Մկրտչի Ալմասյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Պ.Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի սեպտեմբերի 8-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**2021թ. սեպտեմբերի 8 -ին, N 302**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի պարտականությունները կատարող Ժ. Անդրեասյանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Աշտարակի Ն. Աշտարակեցու անվ. h.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Կոստանյան Գևորգ Գրիշայի>> բառերը փոխարինել <<Թաթուլյան Կարեն Թաթիկի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՀՀ "05004247"

Թ-ռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. սեպտեմբերի 8 -ին, N 301**
**ք. Աշտարակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի պարտականությունները կատարող Ժ. Անդրեասյանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Աշտարակի Պ. Պռոշյանի անվ. հ.3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Կոստանյան Գևորգ Գրիշայի>> բառերը փոխարինել <<Գալստյան Նորայր Վոլոդյայի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 7 -ին, N 299
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲԵՐՔԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՎՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Օ. Գրիգորյանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 7-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բերքառատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի ուսուցչուհի Օվսաննա Գրիգորյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. սեպտեմբերի 7 -ին, N 298**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՕՀԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՄԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը, <<Իզմիրլյան>> ԲԿ-ի կողմից տրված ընթացիկ էպիկրիզը, <<Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Միսակյանի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 6-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ուսումնական գծով փոխտնօրեն Արմինե Եղիազարյանի վրա՝ մինչև հիմքի վերացումը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**2021թ. սեպտեմբերի 7-ին, N 297**
**ք. Աշտարակ**

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲԵՐՔԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի սեպտեմբերի 7-ից Աննա Սամվելի Վարդանյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բերքառատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի սեպտեմբերի 7-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. սեպտեմբերի 3 -ին, N 296

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՆՈՐ ԱՄԱՆՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԴԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով, 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Լ. Մարկոսյանի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումն ու անաշխատունակության թերթիկը /սերիա՝ N 161247/ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիդա Մարկոսյանին 2021 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև 2022 թվականի հունվարի 19-ը ներառյալ համարել հղիության և ծննդաբերության արձակուրդի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել տնօրենի ուսումնական գծով տեղակալ Վարդուհի Սարգսյանի վրա:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ. սեպտեմբերի 3 -ին, N 295**

**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ղեկավար Թ⍰ Շահվերդյանի 2021 թվականի օգոստոսի 31-ի գրությունը որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Աշտարակի Ն⍰ Աշտարակեցու անվ⍰ հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Եղիազարյան Գևորգ Արծրունի>> բառերը փոխարինել <<Գալստյան Տիգրան Գևորգի>> բառերով:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ